Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անուն(ներ)ը, ազգանուն(ներ)ը

Արևիկ Անապիոսյան

2. Զբաղեցրած պաշտոն(ներ)ը

ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Ավստրիայի Հանրապետություն (Վիեննա), 2018թ. դեկտեմբերի 6-8

4. Հրավիրող կողմը

Եվրամիության Արևելյան գործընկերություն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Արևելյան գործընկերության տարեկան համաժողովին մասնակցելու նպատակով

6. Քննարկված թեմաները.

- Ձեռնարկատիրական միջավայրի բարելավում
- Հմտությունների և աշխատաշուկայի պահանջների համապատասխանեցում
- Երիտասարդների աշխատունակության բարձրացում

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

- Հանդիպման ժամանակ տեղի ունեցած ոլորտային քննարկումների ձևաչափի համաձայն, հարց և պատասխանների ժամանակ քննարկվել են կրթություն աշխատաշուկա խզվածքի նվազեցման ուղղությամբ իրականացվող քայլերը, ինչպես նաև միջին մասնագիտական ոլորտում շարունակական կրթության առկայությունը:

Հանդիպման ժամանակ վերոհիշյալ թեմանարով տեղի ունեցած երեք ոլորտային քննարկումներից զատ տեղի են ունեցել հետևյալ հանդիպումները.

- Նախաճաշ հարևանության քաղաքականության հարցերով եվրահանձնակատար Յոհաննես Հանի և Ավստրիայի արտաքին գործերի նախարար Կարին Կնեյսլի հետ: Հանդիպման ժամանակ քննարկվել է վաղ մանկության զարգացման ծրագրի ներդրումը Հայաստանում որպես նախադպրոցական կրթություն: Սա կարևորվել է հատկապես կանանց ոգեշնչման և հավասար հնարավորությունների տրամադրման համատեքստում: Միևնույն ժամանակ, քննարկվել են նաև Հորիզոն 2020 ծրագիրը, Հայաստանում առարկայական ծրագրերի վերանայումը և STEM առարկաների խթանումը:

- Հանդիպում Եվրամիության հարևանության քաղաքականության և ընդլայնման հարցերով գլխավոր տնօրինության ղեկավարի տեղակալ Կատերինա Մատերնովայի հետ: Հանդիպման ժամանակ քննարկվել է 2020 թվականի Հայաստանին տրամադրվելիք բյուջետային աջակցության շրջանակում կրթական ծրագրերի դերի և ծավալի մեծացումը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

- Էրասմուս+ ծրագրերի համակարգողի հետ քննարկվել է դասախոսների շարժունության ծրագրերի ավելացման հնարավորությունը: Մասնավորապես, քննարկվել է Էրասմուս+ ծրագրերի շրջանակում դասախոսների համատեղ հետազոտությունների իրականացման և դրանց տպագրման հնարավորությունը: Հանդիպման ժամանակ ներկայացվել է նաև Հայաստանում դուալ կրթության փորձը ՄԿՈՒ ոլորտում և առաջարկվել է քննարկել նմանատիպ համակարգի ներդնումը բարձրագույն կրթության ոլորտում:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

- Ավստրիայի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության դեսպանատան աշխատակիցների հետ հանդիպման ժամանակ ձեռք է բերվել

պայմանավորվածություն, ըստ որի, ՀՀ ԿԳ նախարարությունը դեսպանությանը կտրամադրի երկրի առաջնահերթություններից բխող մասնագիտությունների ցանկ: Ցանկի տրամադրումից հետո դեսպանությունը կտանի աշխատանքներ հայթայթելու համապատասխան կրթաթոշակներ հայ ուսանողների համար:

10. Սպորագրությունը, ամսաթիվը

Արևիկ Անապիոսյան

12. 12. 2018